



01 JAN 2003

Ի Կրոյ կարաչե ք սե րով Ե անչի:

891.99

9-30

Թ. ԳԱՌՆԻԿ

8

# Մ Ա Ս Ի Ս

## ԵՐԿԻՆՔԷՆ ԲԱՐՁՐ

Լո՛յս սուրբ, ողջոյն ընդ ինձ,  
անդամիկ դու, երկնից ծնունդ...



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագածիկ «Էսպերանսո» ելիդ. 17  
1913

2990+

8

Երեք

Հայ տառերու գիրտի

1500 արևակի



3322 84

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ  
**ՅՈՒՂԱԲԵՐ**  
 ՍԵՐՈՐՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ  
 Ի՝ 23-Ն ՇՈՒՆՎԱՐԻ 1929 թ. ԹԻՖԼԻՍ

Ահա երկու տօներ, երկու փառքի միացած ուժեղ արտայայտութիւններ որոնք կը խօսին հսկայ դարերու լեզուն. մին, զիրը տասնըհինգ դարերու, միւսը տպագրութիւնը չորս հարիւր տարիներու օրեր թէ դարեր. օրերու կամ թերևս վայրկեաններու թըռիչք մը միայն պիտի տեսնէր հայը անոնց մէջ, ինք ևս իր կենդանութեան արտացոլացումով առաջնորդուած, բայց ալևորուած դարերու մէջէն կը բերէ մեզ զանոնք պատմութիւնը՝ ինքն ալ ալևորուած. և զիտէք ինչպէս... Հայ տառերը՝ արեան ծովերը և ովկեանները պատռելով, ջարդի, աւերներու լեռներէն ցատկելով, հայ մայրերու և հայ անհամար մշակներու դիակներ կոխոտելով հեւասպառ հասեր են այս օրուան, այս օրուան՝ երբ չեն պակսիր դեռ Հայուն դիակները, ինչպէս երազի մը մէջ ուր մէկը սարսափահար կը փախչի, սարսափի անդունդներ անցնելով կը յուսայ հասնիլ տեղ մը, և ուր փուշերով ցանկ մը կը տեսնէ և վիթխարի ապառաժ մը, կամ ծով մը, յուսահատութեան ծովը...

Այդ երազը մեր իրականութիւնն է, և Հայ տառերը նոյն արհաւիրքէն կուզան մեզ իրենց սկիզբէն մինչև այսօր. հայ տպագրութիւնն ալ չէր կրնար բաժնուիլ հայ իրականութիւնէն: Բայց յուսահատութեան ծովին տեղ հայ տառերը և իր քոյր տպագրութիւնը մեզ կը ցուցնեն ովկեան մը յոյս, և անհուն մը կենդանութիւն...

Կ'երգեն այնտեղ մահերգը հայուն. սուտ է, այսօրուան տօնը մեզ նոր անուշ օրօր կ'ըսէ, օրօր որ մեզ նոր կեանք կուտայ. կ'ողբան այնտեղ «Անհետացող Հայաստան...» այսօրուան տօնը մեզ կ'ըսէ անոնց

Ֆոխան «Ես ձեզ համար յաւիտենական ճամբան կը սարքեմ...» Մենք՝ այսօր միայն կը ծնինք, և մեր կեանքէն Լոյսը ծիրաներփեան՝ բիւրեղներով կը կայծուռի... Արեւը այս երեկոյ մայրը մտաւ և երկինքը նըսեմացեր է Մասիսին քով որ արդէն առասպելիկ տիտանութեամբ փառաւոր ժպիտ մը ունի իր վարդա-կարմիր այտերուն վրայ. և հպարտ է, եւ անելի բարձր է քան երկինքը, որովհետեւ այսօր լոյսի տօնը կը կատարէ, լոյսի որ իր ոտքերուն տակ կերտեցին հայ Պրօմէթէսներ:

Լոյս սուրբ, ողջոյն ընդ քեզ...

\* \* \*

Եւ զարմանալի չէ որ այդ հսկայ իրականութիւնէն շմորեր և շուարեր ենք, աւաղ որ իր վեհութիւն գեռ չենք զգար և կը դիմաւորենք զայն ինչպէս պիտի դիմաւորէինք հասարակ երևոյթ մը... դժբաղդ մանուկներ... Երանի՛ թէ կանգնուէր յուշարձան մը ներկայացնող հայ միտքը՝ բարձրացնելով այնտեղ ուր ախրօրէն կը հանգչի Մեսրոպը:

Լուսաս անոր կը յատկացնեմ:

Թ. Գ.



### ՓԱՌՔ ԶԵՂ

ՍՆՆՈՆՆԷՆ հին դարերուն,  
Եւ ծովի պէս  
Ցոյց կուտաս քու վեհութիւն,  
Եւ կայծի պէս  
Կը ծագես կենդանութիւն,  
Արևի պէս  
Կը մաղես երջանկութիւն,  
Տիտանի պէս  
Կը յաղթես խաւարներուն,  
Արծիւի պէս  
Կը տանես հայն աստղերուն,  
Եւ բուրգի պէս  
Կը պահես զայն հաստատուն,  
Եւ մօր մը պէս  
Կ'առնես վիշտ մեր սիրտերուն,  
Փառք քեզ ով տառ, որ կըստեղծես  
Դու հայուն ազատութիւն:



ՈՂՋՈՅՆ ՔԵՉ

Ողջոյն քեզ դժխոյ թագուհի հայ տառ,  
Որ լոյսով կուգաս, հուրով բոցավառ,  
Դու չե՞ս որ տուիր արևին իսկ լոյս,  
Դու տան, չե՞ս միայն թշուառութեան յոյս:

Ողջոյն քեզ դժխոյ թագուհի հայ տառ,  
Որ ժպտով կուգաս, ժպտով այլեփառ,  
Քու զաւակներուդ հալածուած, թշուառ,  
Տան, լոյս տուր մեզ, կեանք տուր մեզ խանդավառ:

Ողջոյն քեզ դժխոյ թագուհի հայ տառ,  
Որ քու մատներէդ շող ծիրանեվառ  
Մեզ կը սըրըսկես իբր արշալոյս նոր  
Որով կը պճնես մեր նոր ամանոր:

Ողջոյն քեզ դժխոյ թագուհի հայ տառ,  
Արփիով շինուած ծաղիկ լուսավառ,  
Ողջոյն ծաղկազարդ ճառագայթ հրավառ  
Ողջոյն անխաւար արև բոցավառ:



ԻՆՉՈ՞Վ ՈՂՋՈՒՆԵՄ

Հայ տառերու տօնը կուգայ  
Հայ դարերու լոյսը կուգայ,  
Ծափեր անոր կըսպասեն,  
Երգեր անոր կըսպասեն,  
Սիրտեր անոր կըսպասեն,  
Կեանքեր անոր կըսպասեն,  
Կռունկն անոր կը նայի,  
Կանգուխան անոր կը նայի,  
Երկիրն անոր կը նայի,  
Հայ գոհն անոր կը նայի:

Թօնիրն անով կը վառի,  
օճախն անով կը վառի,  
Միտքը անով կը վառի,  
Կեանքը անով կը վառի:

Հայ տառերու փառքը կուգայ  
Հայ կեանքերու ժպիտ կուգայ  
Ինչո՞վ ողջունեմ. գրչովըս զայն ողջունեմ,  
Ուրիշ ոչինչ ունեմ:



ՏԱՃԱՐ ԿԱՆԳՆԵՆՔ

Տաճար կանգնենք հայ տառերուն  
 — ծաղիկին վրայ.  
 Հմայք կրզգայ անկէ թռչուն,  
 ու հոն թառ կուգայ.

Տաճար կանգնենք հայ տառերուն  
 — երկնքին վրայ.  
 Նախանձ կրզգայ Աստուածութիւն  
 ու գայն կը գողնայ.

Տաճար կանգնենք հայ տառերուն  
 Հայ հողին վրայ,  
 Թշուառ հայուն մինչև անհուն  
 Կոյսէ կեանք կուտայ:



ԱՀԱ ԿՈՒԳԱՅ ԹՄՓՕՐԸ

Ահա կուգայ թափօրը,  
 Հայուն տօնը, սուրբ օրը.  
 Ելէք, ելէք ծափ գարկէք,  
 Մոռցէք ձեր օրն վշտաբեկ:

Հայ մայր, սրբէ արտառք.  
 Նետէ մէկ կողմ վիշտ ու սուգ.  
 Եւ քու որդւոյդ հայուն տառ  
 Դու հեգել տուր խանդավառ.  
 Ըսէ անոր նա է քու  
 Ապաւէնըդ, տէրդ հուժկու.  
 Ըսէ անոր ինձ նման  
 Նա է հգօր քու պաշտպան:

Ահա կուգայ թափօրը,  
 Հայուն տօնը սուրբ օրը.  
 Ելէք, ելէք ծափ գարկէք,  
 Մոռցէք ձեր օրն վշտաբեկ:

Դնւ, հայ թշուառ ծերունի  
 Վշտի խորհուրդ հայ երկրի,  
 Զորցնւր այսօր աչերդ թաց,  
 Բաց, աչքերըդ խոր գացած:

Խնդան Հայուն ծերունի,  
Տես, մեզ նոր կեանք կը ծընի,  
Եւ չի մըտած գերեզման,  
Թող գիրն օրհնէ քու բերան:

Ահա կուգայ թափօրը,  
Հայուն տօնը սուրբ օրը.  
Ելէք, ելէք ծափ զարկէք,  
Մոռցէք ձեր օրն վշտաբեկ:

Դնւ, հայ մշակ տառապած,  
Հողին վիժած սեւ աստուած.  
Թող վայրկեան մը քու արօր,  
Տես մեզ նոր լոյս բերող օր:  
Բայց վէրքերով ծածկըռւած:  
Քու վէս կուրծքըդ սըրբացած  
Հողիդ վըրայ ծունկ եկուր.  
Քեզ լոյս եկաւ, ալ փառք տուր:

Ահա կուգայ թափօրը,  
Հայուն տօնը, սուրբ օրը,  
Ելէք, ելէք ծափ զարկէք  
Մոռցէք ձեր օրն վշտաբեկ:

Եւ Հայ քերթող, ել կանգնէ,  
Այսօր գըչիդ մեծ տօնն է.

Առ քընարըդ բանաստեղծ,  
Երգըդ մեզ տուր, սուրբ, անկեղծ.  
Քնարդ ցաւի արձան է,  
Բայց մեզ ժըպիտ դու ցանէ,  
Եւ մեր անուշ տառերուն  
Ձայնը դու շատ տար հեռուն:

Ահա կուգայ թափօրը,  
Հայուն տօնը սուրբ օրը.  
Ելէք, ելէք, ծափ զարկէք,  
Մոռցէք ձեր օրն վշտաբեկ:



## ԴԻՄԱԽՈՐՈՒՄ

Հըրաբուխներ վառենք անշէջ իբրև բուրվառ,  
 Իբրև ցընծղայ շաչենք ամպեր,  
 Քըշոց շարժենք անեղ ծառեր,  
 Ահա կ'երգեն Լոյս-աստուածի հըրաշափառ.

Եւ իբրև ջահ արևն ամբողջ վառենք անոր,  
 Իբր ար ու հաց՝ մենք լեռներ տանք,  
 Նա կը բերէ մեզ լոյսէ կեանք.  
 Ահա նա է, արշալոյս մը կը ծագէ նոր:



## ՀԱՅ ՏԱՌԵՐԷՆ

Տեսէք, հայ տառէն բոյլ բոյլ ծաղիկներ  
 Վար կը թափթըփին,  
 Եւ արևելեան առկախ պարտէզներ  
 Իրմէ կը կախուին:

Տեսէք, հայ տառէն խումբ խումբ հըթիռնիր  
 Վառուած կ'արձակուին,  
 Աստղերն ալ այսօր գոյնգոյն դարձեր  
 Չորս կողմ սըրըսկին:

Տեսէք, հայ տառէն դողդոջ առուակներ  
 Լացի պէս կ'իյնան.  
 Ժայռերու ծայրէն ժայթքող ջրվէժներ  
 Խրոխտ կը պոռթկան:

Տեսէք, հայ տառէն ողջոյն մը կուտայ  
 Թշուառ խեղճ հայուն,  
 Իբրև ըսփոփ մը անոր սև օրուայ,  
 Սո՛ւրբ ազատութիւն...



## ԱՆՀՈՒՆ ՄԸ ՅՈՅՍ

Դիակի բլուրներ երկիրը ծածկեր են,  
 Եւ արցունք կը հոսին կոյսերու աչերէն.  
 Ուր ծունկի կ'արտասուեն և ժայռեր կը պատուեն,  
 Սիրտերէ դուրս թափած իրենց սուր հառաչէն:

Ձէ, մի լար հայ քուրիկ,  
 Ահա քեզ ժպտի յոյս,  
 Դուն դեռ նոր պիտ' ապրիս  
 Ահա քեզ լեռ մը յոյս:

Արիւնի ովկեաններ երկրին շուրջ կը դողան,  
 Իրենց մէջ արիւնի հեղեղներ մըռնչեն.  
 Անոնց մէջ խողխողուած հայ զոհեր կը լողան,  
 Ուր մայրեր խենթ դարձեր մազերնին կը փեթտեն:

Ձէ, մի լար, խեղճ մայրիկ,  
 Ահա քեզ ժպտի յոյս.  
 Դուն դեռ նոր պիտ' ապրիս,  
 Ահա քեզ ծով մը յոյս:

Ջարդերու սարսափներ հայ երկրէն կախուեր են,  
 Արհաւիրք կըսպառնան, կըռինչով մահ կ'ոռնան:  
 Մշակը հայ երկրէն կը փախչի սարսափէն,  
 Երկրէն դուրս լինելու իր հացին մուրացկան:

Ձէ, մ'երթար աղբարիկ,  
 Ահա քեզ ժպտի յոյս.  
 Դուն դեռ նոր պիտ' ապրիս,  
 Ահա քեզ կեանքի յոյս:

Գիրերու, լոյսերու տօնն ունինք մենք այսօր,  
 Հմայքով, բերկրանքով ողջսյն տան հայ տառին՝  
 Պարբոնած, ժպտագին, ծով, ովկեան սար ու սոր,  
 Նոր կեանքի նոր ծիլեր կուտայ քեզ սուրբ տարին:

Անհուն մը յոյս ահա  
 Տես քուրիկ աղբարիկ,  
 Մեզ համար կը խայտայ.  
 Ալ խնդայ խեղճ մայրիկ:



3322-84

ՀԱՅ ՏԱՌԵՐՈՒՆ ՏՕՆՆ Է.

Օհէ, օհէ, հայ տառերուն  
 Փառքի օրն է այսօր.  
 Եւ մեր կեանքի հին դարերուն  
 Փըպխտն է լուսածոր:

Օհէ, գիտէք, հայ տառերուն  
 Անմահ տօնն է այսօր.  
 Հայուն անցքն է դէպի անհուն,  
 Իէպ անեղ լոյս փառաւոր:

Հայ աղբըրտիք հայ տառերուն  
 Շուրջն ամենքս պար բռնենք.  
 Հայ աղբըրտիք նոր դարերուն  
 Իրմով մենք ողջունենք:



ՀԱՅ ՏԱՌԵՐՈՒՆ ՄԷՉ

Հայ տառերուն մէջ տեսէք, պար են բռներ  
 Կըռունկը և ծիծեռնակ,  
 Եւ հիւսեր են հայ տառերով իրենց բոյներ.  
 Մեղեդի կ'երգէ սոխակ:

Հայ տառերուն մէջ տեսէք, լեռն ու գետակ,  
 Կոպիճներ և քաղցր առու,  
 Կը ծիծաղին. միմեանց կընեն կատակ.  
 Եւ համբոյր տան իրարու:

Հայ տառերուն մէջ տեսէք, կը շողշողայ  
 Աստղիկը, և կը դողայ.  
 Եւ արևը մաղելով հուր շափիւղայ  
 Անհունին հետ կը լողայ:

Հայ տառերուն մէջ տեսէք, պահուրտեր է  
 Իրախտը գեղաժպտուն,  
 Ակնածանքով քղանցքին տակ մըտեր է  
 Մասիսի վեհականգուն:



### ՀԱՅ ՏԱՌԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ

Երբ զեփիւռը օրօր կ'երգէ ծառերուն,  
Համբոյր տալով տերևներուն քաղցրանուշ,  
Երբ առուակը հրաժեշտ կուտայ սարերուն,  
Եւ կը պատմէ լիճին անվերջ անցեալ յուշ,

Երբ ալեակը ողբերգ կ'երգէ աւազին,  
Որ ըզգածուած կը յայտնէ իր մըմունջը.  
Երբ սոխակը իր դարաւոր երազին՝  
Սիրած վարդին կը զրկէ իր տրտունջը,

Երբ ծաղիկներ աղօթք կընեն Արարչին,  
Խունկ կը ծըխեն, բոյր կը ծորեն սրտայոյզ,  
Եւ երբ աստղեր երբ այգին մէջ կը թագչին՝  
Եւ կը խնդրեն զեռ ապրելու քիչ մը յոյս,

Անոնց լեզուն՝ լեզուն է հայ տառերուն,  
Օհ, համբուրեմ քաղցրը տառեր հայերուն:



\*  
\*  
\*

Երբ կոնակը անդունդներէն դուրս ժայթքած,  
Եւ գայրացած ժայռին կուտայ իր շառաչ,  
Երբ վայրենի քամին հըրէշ, սև՝, կատաղած,  
Կը մըռընչէ անտառին ուր տայ հառաչ,

Երբ կը բաղխին անեղ ամպեր իրարու,  
Եւ ցասումով և՛ գայրոյթով կը գոռան,  
Երբ կը պատռէ կայծակն երկինք անարկու  
Շանթէ լեզուով որոնք հուրով մեզ կ'ոռնան,

Երբ Վէստեաններ պատգամ կուտան դարէդար,  
Յիշեցնելու իշխանութիւն և փառք հին,  
Իբրև վըրէժ Իրաւունքը սուրբ, արդար  
Երբ կը գոռայ պաշտպան կանգնած խեղճ զոհին,

Անոնց լեզուն՝ լեզուն է հայ տառերուն,  
Օհ, պաշտեմ ես հըզօր տառեր հայերուն:



## ՄԻՐԷ ԳԻՐԸ

Միրէ գիրը, նա ցոյց կուտայ  
Ալիքին շառաչը, նոճիին հառաչը,  
Առուակին կարկաչը, և դաշտին կանաչը,  
Ձորակին մրմունջը, փոթորկին մըռունչը,  
Թռչունին արտունջը, և զեփիւռին շունչը,  
Ծաղիկներուն թոյրը, ածուններուն բոյրը,  
Սէգ հովերուն սոյրը, տերեւին համբոյրը,  
Արևին շառայլը, սև ամպին մըռայլը,  
Վերջալուսնի հեւլը, լուսնեակին փայլը.

Միրէ գիրը նա մեզ կ'երգէ  
Միրահարին եարը, նօթիին թախիժը,  
Ղարիբին տեարը, բանտուածին կսկիժը,  
Ժըպիտին բողբոջը, մայրիկին գորովը,  
Մանուկին դողդոջը, հայրիկին կորովը,  
Ձըքաւորին լացը, հիւղակին սև հացը,  
Մարդկութեան տանջուածը, սարուկ հալածուածը.  
Թագն է աշխարհի, փառքն է մարդկութեան,  
Զանգ իրաւունքի, կեանքն ազատութեան:



## ՀԱՅ ՏԱՌԵՐՈՒՆ ԹՄՓՕՐԸ

Ահա թափօրը, գորդը դարերուն,  
Լնյւր երկնքի, և փառքը երկրի,  
Ահա նոր կեանքը Լոյսին, Տառերուն,  
Ինչպէս ամեն սիրտ անով կը բերկրի.  
Ահեղ հսկայ մը, գլուխը երկին,  
Մէկ ու Մասիսն է, միւսն Ամանաց,  
Դէմքն՝ ամբողջութիւնն է տիեզերքին.  
Իր ճրկոյտովը կովկասն է բռնած,  
Եւ իր մէկ թևով հեռուն կիլիկեան:

Մօրուք մը ուրաեղ լեռներ կը կորչին,  
Ալեփառ մաղեր ուրկէ վար կիյնան  
Արաքան ու Եփրատ դանդաղ, տխրագին.  
Աչերը երկու աստղեր են ժպտուն,  
Մին Լուսաւորչայ, միւսը Հովւին,  
Ուրկէ կախուեր են ջահեր պսպղուն,  
Ուրկէ կը ժայթքի լոյս անդրէածին:  
Երկինք կ'ակնածի, կ'ակնածի Աստուած  
Երբ կ'անցնի Լոյսի հսկան փառաւոր,  
Ողջոյն մը հաղիւ կուտայ երկիւղած  
Երբ Տառի հսկան կ'անցնի ահաւոր,  
Իր ուսէն թողած վարդագոյն Արփին  
Իբր արքայական բեհեզեայ շուրջառ,  
Եւ իբրև գօտի կապած Ծիրանին.

Մատնի գրած մատին Արևն լուսավառ,  
 Գաղցր աղանիներ գլխուն վեհօրէն  
 Նոյայ Տապանը իբրև սաղաւարդ  
 Բռներ են. իբրև պսակ զըրեր են  
 Երկինքէն շինուած Դրբախան ծաղկազարդ:  
 Եւ վեհատեսիլ Գողթան երգիչներ,  
 Կոխելով ծովուն վըրայ ծիրանի,  
 Լոյսի հսկային գլխուն են բռներ,  
 Իբրև փառաշուք մի ամպհովանի՝  
 Վահագրն Աստուած. որ իր հուր հերով  
 Եւ բոց մօրուքով ճաճանչեր արփին  
 Ծածանումներով հպարտ, անվրդով  
 Ճիւղերուն վըրայ նուրբ եղեգնիկին:  
 Ու Լոյսը հրգօր գերակայ ախտան,  
 Կը դիտէր շարքը իր զաւակներուն,  
 Շառաւիղները իր անմահութեան,  
 Որոնցմէ հոսի միշտ կենդանութիւն:  
 Ահա Սահակը, խըրոխտ երկնամբարձ,  
 Հասակն արմաւի է պարթևական.  
 Թափօրին առջև ջահն է բռներ բարձր,  
 Եւ արտասուածքը կ'երգէ շարական:  
 Ահա Մեսրոպը լուսասփիւռ լուսին,  
 Որ Ասորիքէն մինչև Արարատ,  
 Հայուն զարթօնքն է բռներ իր ուսին,  
 Եւ լոյսէ անձրև կը մաղէ առատ:  
 Ահա Եգնիկը որ իմաստութեան

Լոյսէ մատեանը իր ձեռքն է բռներ,  
 Որուն սրբազան բերանէն կ'իյնան  
 Ոսկի, աղամանդ և մարգարիտներ:  
 Ահա Եղիշէն՝ բարձրը սարերուն  
 Բիւրեղանման առուակը վճիտ,  
 Առիւծանըման Հայուն քաջութիւն  
 Կ'երգէ շուրթերովն իր լուսաժըպիտ:  
 Եւ Խորենացին Հայուն դարաւոր  
 Կեանքը կ'երգէ և զայն կը կերտէ.  
 Կը պատմէ անոր կեանքը փառաւոր,  
 Աւերն հայրենի սրտառուչ կ'երգէ:  
 Մին ահա, որուն բերնին մէջ վխտան  
 Լեռներ, անդունդներ. երկինքն ալ հոն է,  
 Արհաւիրքն ալ հոն. և որմէ դողան  
 Իր իսկ բառերը. Նարեկացին է:  
 Ահա Ներսէսը, Շնորհալին սուրբ,  
 Որ ծաղիկներուն առեր է լեզուն.  
 Եւ անոնց նրման և անոնցմէ նուրբ  
 Կ'երգէ խանդաւառ և լուսազեղուն:  
 Ահա աշուղներ շունգուրնին առած,  
 Նըւագն իրենք են իրենց շուրթակին.  
 Սայաթ Նովան է սիրով տառապած  
 Անուշ բլբուլն է. իր հեան է Շիրին:  
 Ահա Աբովեան, հայ մտքին օջախ.  
 Հայ մտքին շանթը՝ Գամառ-Քաթիպան.  
 Եւ Նազարեանը, Միքայէլն խիզախ,

Վեհ կոթողները հայ ազատութեան:  
 Ալիշանն անա հայրենի երկրին  
 Եւ թագ կ' պարտէզ կ' հայ մտքին վարդ,  
 Եւ Խրիմեանը իր քով լալազին,  
 Հայ գոհին համար սե, սքաւոր զարդ.  
 Պէշիկթաշեանն անա նուրբ ծաղիկ,  
 Համբոյր մը կուտայ քաղցրը հովիկին.  
 Եւ անա Դուրեան՝ երկնից աստղ գողարիկ  
 Աստուծոյ շանթ մը կընեատէ ուժգին:  
 Կ'անցնի թափօրը վեհ Լոյսին տիտան,  
 Որուն հետեին հայ արքաներ վէս,  
 Ճերմակ նժոյգի վրայ, մեծն Տիգրան,  
 Տրդատ, Վռամշապուհ, խրոխտն Արտաշէս:  
 Այսպէս փառաւոր կ'անցնի վեհ թափօր,  
 Մինչ հայ երգիքէն մայր մը լալազին  
 Կը խնդրէր անկէ քիչ մը ուրախ օր  
 Որ հայ երկրին մէջ խնդայ իր սրդին:



ՏԱՌԻԿ—ՊԱՊԻԿԻՆ ՆՈՒԷՐՆԵՐԸ.

Տառիկ-Պապիկը նստեցաւ ուրախ,  
 Եւ հայ ծերունին կանչեց նախ իր քով.  
 Եւ ըսաւ, այ մարդ, ինչո՞ւ դու միշտ ախ  
 կը քաշես երկաթ խոր հառաչանքով.  
 —«Ծովեր կը քամուին իմ սև վշտերէս,  
 Ըսաւ ծերուկը. զանոնք տեսեր ես»:  
 Առ քեզ դըրախտ մը իբրև մի նուէր  
 Կը մոռնաս այնտեղ շուտ քու սև օրեր:

Դու եկուր, այ կին, ինչո՞ւ սև հագեր,  
 Եւ ինչու դէմքըդ այնքան դեռատի,  
 Ունի պառաւին դէմքին թորշոմներ  
 Եւ աչերդ արդէն խոռոչներ ունի:  
 —«Լեռներ կը դիզուին իմ սև վիշտերէս,  
 Ըսաւ հայ կինը, զանոնք տեսեր ես»:  
 —Առ քեզ իմ նըւէր երկինքն աստղագարդ  
 Անկէց միշտ քաղես ժրպիտ ցանող վարդ:

Եկուր հայ մըշակ, բայց ըսէ առաջ,  
 Արդեօք ծնողըդ նոյնիսկ վիշտն էր սև.  
 Մազիդ ծայրէն իսկ կը պոռթկայ հառաչ  
 Կուրծքըդ կը պատուէ շունչիդ ամեն հեւ:  
 Լուռ էր մշակը. Տառիկը ըսաւ,  
 Գիտեմ հայ մշակ, ունիս կրկնակ ցաւ,  
 —Առ քեզ իմ նըւէր սա դաշտը զմըուխա,  
 Բիւր ~~ճարտիւններով~~ յի. քու միակ ուխտ:  
 զորքէն/ու/

Որդեակ մօտս եկուր, փառք որ վերջապէս  
 Գըտայ հոս մէկը սրուն դէմք խնդար.  
 Գրկեց և գոչեց «Ժպտի քու երես,  
 Ժպտող անթառամ ըլլայ ամեն դար»:  
 Մանուկը փութկոտ՝ Պապիկ ի՞նչ նուէր  
 Բերիր ինձ համար ըսաւ անհամբեր.  
 Արև մը տալով Պապիկը խնդաց:  
 Ճառագայթին վրայ «Կեանք էր դըրոյմուած»:



### ԱՂՕԹՔ ՀԱՅ ՏԱՌԻՆ

Կեանքէդ ի վեր անկէց առաջ,  
 Չունինք նոյնիսկ ժպտի փըստը,  
 Մեր ծընունդէն մինչև այսօր  
 Օր մը չիկայ մեզ անհառաչ:  
 Հըգօր ես դու հայութեան Տառ,  
 Մեր հառաչը մեզմէ շուտ առ:

Մեր արցունքներ քանի դարեր  
 Կը հոսին վար մեր աչերէն.  
 Թըջեն երկինն ամբողջօրէն  
 Եւ կ'ողողեն ամբողջ սարեր:  
 Հըգօր ես դու հայութեան Տառ,  
 Մեր արցունքը մեզմէ շուտ առ:

Տիեզերքը սեղմենք մի քիչ,  
 Դուրս կը ժայթքէ արեան հեղեղ.  
 Հայուն արիւնն է ամեն տեղ,  
 Կը կազմեն բիւր արիւնի լիճ:  
 Հըզօր ես դու հայութեան Տառ,  
 Արեան բիծն իսկ մեզմէ շուտ առ:

Ամեն տեղ զոհ, ջարդ և աւեր,  
 Լեռներ անոնց տակ կը փշրին.  
 Փոշի կ'ըլլար նոյնիսկ երկին  
 Երբ ունենար հայուն ցաւեր:  
 Հըզօր ես դու հայութեան Տառ,  
 Ջարդի սարսափ մեզմէ շուտ առ:



### ԱՆԷԾԻ ՀԱՅ ՏԱՌԻՆ

Եթէ Հայ Տառ, չերևար քեզ  
 Հսկայ լեռներ հայ դիակին,  
 Եւ արիւնով շառ բոցակէզ  
 Արիւն թափող հայուն երկին,  
 Դո՛ւ, կուրցած Տառ, Հայուն պէտք չես:

Եթէ Հայ տառ չես նշմարեր  
 Մեր արցունքին անեղ ովկեան,  
 Եւ հառաչը դոր հայ մայրեր  
 Իրենց սրտին խորէն կուտան,  
 Դո՛ւ, անգործ Տառ, Հայուն պէտք չես:

Եթէ միայն մեր ցաւերուն  
 Արձագանքը պիտի ըլլաս,  
 Հայ պառաւին պէս շրուարուն,  
 Բուերու պէս դու պիտի լաս,  
 Դո՛ւ, անբան Տառ Հայուն պէտք չես:

Եթէ չունիս մեր անհամար  
 Վիշտերուն զէթ մի փրկութիւն,  
 Եթէ նիս Հայուն համար  
 Գէթ մի կաթիլ երջանկութիւն.  
 Դ՛նւ, անպէտ Տառ Հայուն պէտք չես:

Եթէ չես տար դու ալ մեզ յոյս,  
 Եւ կը թողուս որ Հայն այսպէս  
 Կորչի, պակաս ըլլայ քու լոյս.  
 Կորի՛, մեռի՛ր, կ'անիծե՛մ քեզ.  
 Դ՛նւ, մեռած տառ հայուն պէտք չես:



« Ազգային գրադարան



NL0313651